

լաւ եւ օր ըստ օրէ կու յաւելնու: Վասն աստուծոյ այս քանի քրիստոնէաքս, որ կան եւ քահանայքս մինչ ցայժմ, այլ արդ՝ յոյժ ենք պակասելորք եւ աղքատք. Ձեր հրամանքդ քաչ գիտացէք, որ թէ այսպէս մնացին ամենքն կու կորին: Ձեր գործ այդ է, որ ամենայն աշխարհ բերէք եւ յորդորէք ի սուրբ հաւատս, մեր որք ենք ի նոյն հաւատ եւ սէր, կամէք, որ կորիմք: Մօնսնիօր, նայեա ի տառապանս մեր, մեր ձեր մեծ անուամբն ուրախ ենք եւ յոյս ունիմք եւ պարծիմք առ ամենայն ազգս եւ դուք զմեզ անմխիթար էք թողել, մոռացել էք. թէ զմեզ խղճալի չէք, նախնեաց աշխատանս նայեցարուք, եւ նոցա երեխտիքն մոռանալ չէք: Դարձեալ ծանր, ես այլ կարողութիւն չունիմ աշխատելոյ, էթէ իմ ոօճիկն յաւելաբար կու առաքէք լաւ, թէ չէ ամենեցունց Կօնկրէկացիօնին շատ բարեւ առնես, ասես որ ես այլ եպիսկոպոսութիւն կարող չեմ առնել, ուրիշ մարդ ուղարկեցէք: Եղբարքս ուսման հետ չեն վասն պակասութեան աշխարհիս, որ թէ ասէք պիտոյ է լատին կարդան. առաջ պիտոյ է մեր լեզուն լաւ իմանան եւ արտաքին բանի վերահաս լինին, որ յետոյ լաթին շոտով իմանան: Վասն Աստուծոյ հաւատարմապէս հաւատայ բանիս, թէ չէ դատաստանին դուք էք համար տալոյ: Այլ ամենայն բան վերոյ գրեալ եղբարքդ կու ծանուցանեն. եւ ես աղաչեմ վասն վերոյ գրեալ պատրի ֆրա Գրիգորն փոքր մի արտաքին բանի տեղեակ է մերս լեզու, տաս ի պատրի ֆրա Կլեմէնդն, որ լատին եւ մերոյ լեզու ուսուցանէ, զի սեր դորս այդ է:

Ողջ լեր հոգուով սրբով: Այսք ամենայն ճշմարտապէս գրեցուցի եւ յատուկ ձեռօք գրեցի: Թվ[իւն] ՌՌԽԶ [1646] ապրիլի Ա [1] գրեցաւ:

Fra Augustinus arcepiscopus Naxiuansis

*APF, SOCG, vol. 65, ff. 312r. Բնագիր:*